ԿԱԽԷԹ ԵՒ ՇԻՐԱԿ

Ե. ՂԱԶԱՐԵԱՆՑԻ

Սղնախի գարունը մի չքեղ տեսարան է ներկայացնում. ամբողջ քաղաքը ծածկուած է կանաչով, ամբողջ քաղաքը խեղդուում, կորչում է կանաչի մէջ։ Որ կողմ նայես՝ տերեւախիտ ծառեր, թուփեր, խոտեր և ծաղիկներ... որ կողմ նայես՝ կենդանութիւն,—դալար, երիտասարդ, ծաղկող ու բացուող բնութիւն։ Կանաչազարդ բլուրները և դրախտանման ձորակները՝ իրանց խայտաբղէտ կանաչ և ոսկի զգեստով,—գրաւում, կախարդում են մարդու աչքը։ Նորեկ թռչունների ներդաշնակ մեղեդիները և սոխակի անուշ գեղգեղումները փայփայում, գգւում են լսողութիւնը։ Սղնախի բնութիւնը Վրաստանի ամենաճոխ դարդարանքներից մէկ է։ Ամբողջ քաղաքը շինուած է բլուրների, բարձրավանդակների վրայ, որոնք տեղ-տեղ միմեանցից բաժանուում են խոր և նեղ ձորակներով։ Քաղաքի արևելեան և հիւսիսային կողմից երևում է մի հաղւագիւս, վիթխարի տեսարան—Ալազանի հովիտը։ Ընդարձակ և կանաչ մակերևոյթով ծածկուած մի ծովի նմանութիւն ունի այդ հովիտը Սղնախի բարձրութիւնից։ Այդ ցամաքային «ծովի» վրայ՝ հեռուից երևում են խուփ-խուփ անտառներ, մշակուած արտեր և մարգագետիններ։ Ալազան գետը, արծաթագոյն ժապաւէնի նման, հիւսիսից դէպի հարաւ՝ կտրում-անցնում է այդ հովտի մակերևոյթը։ Գետի այն կողմը, դէպի արևելա-հիւսիս՝ տարածուում են աւելի խիտ, միացած, թաւ անտառներ, իսկ անտառների ետևից, մութ-կապտագոյն անֆիթէատրով՝ բարձրանում են ձիւնապատ լեռնաշղթաներ։ Նուրբ գեղարուեստական գրիչ է հարկաւոր, որ կարողանալ արտայայտել այն լուսաւոր, վեհապանծ տպաւորութիւնը, որ մարդ ստանում է Ալազանի հովտին նայելուց... Մանաւանդ այդ տեսարանը հրաշալի է պարզ երեկոներին, Սղնախի գերեզմանոցի բարձրութիւնից։ Մարդ ամբողջովին կլանուում, գնում, խորասուզուում է բնութեան մէջ։ Առաջնում բացուած ընդարձակ, հեռու, լայնածաւալ հովիտը, որի աննկարագրելի մաքրութիւնը, երկնքի կամարաձև, իտակ և հոյակապ վրանը, որ հեռու հորիզոնի մօտ

միանում է լեռնաշղթաների հետ,—այդ բոլորը գիտողի մէջ զարթեցնում է մի այնպիսի փառաւոր, պայծառ և աշխոյժ տրամադրութիւն, մի այնպիսի բարձր, սրբազան զգացմունք, որ մարդ կամենում է սաւառնել ամբողջ հոգով այդ բնութեան մէջ. մարդու հոգին այնքան բարձրանում, վսեմանում է, որ ուզում է իւր մէջ. ամփոփել ամբողջ աշխարհը, ուզում է անվերջ ապրել, սիրել, աքանչանալ...

Ահա այսպիսի տպաւորութիւն է անում Ալազանի հովիտը։ Երջանիկ են այս երկրի մարդիկ, բայց աւելի ես երջանիկ են նրանք, ովքեր գիտեն օգտուել բնութեան հրաշալիքներով, ով որ գիտէ զգալ այդ բնութեան կախարդիչ գեղեցկութիւնները...

Աղնախից դէպի հիւսիս՝ Ալազանի հովտի վրայով՝ տարածւում են բազմաթիւ գիւղեր, որոնք այդպէս գնալով՝ հասնում են մինչև Թէլաւ և, նորա հետ միասին, կազմում են՝ աշխարհահռչակ և բազդաւոր Կախէթը. Աղնախի մօտ գտնուող Կախէթի գիւղերը հետեւեալներն են՝ Անագա, Բալգարան, Կոլակ, Կարղանախ, Վէջին, Բակուրցիխէ, Դուրջան, Ախաչէն, Վէլիսցիխէ և այլն։ Այդ գիւղերը մեծ մասամբ բնակւած են վրացիներով, իսկ հայերի թիւը բնակիչների հաշիւ $^1/_{10}$ մասը կազմէ։ Ամբողջ Կախէթը խաղողի մի մեծ և ընդարձակ այգի է։ Աղնախից դէպի հիւսիս տանող մաքուր և գեղեցիկ խճուղու վրայ զբօսնողը կը հիանայ գիւղերի այդ ներդաշնակ և միացած ամբողջութիւնով. կարծես մի մեծ և բազմամարդ քաղաք է տարածւած ոտներիդ տակ։ Տեղ-տեղ երևում են փոքրիկ եկեղեցիների և վանքերի գմբէթները, չինութիւնների թեք կտուրները, հսկայական ընկուզենիների գանգրաւոր գլուխները, և, միեւնոյն ժամանակ, լսւում է մի բարեխառն աղմուկ, մի անվերջանալի, աշխոյժ կենսական աղաղակ... Այդ գիւղն է, գիւղական կեանքն է իւր բոլոր հովւական պարզութիւնով, իւր առօրեայ բոլոր հոգսերով, աշխատանքով ու զբաղմունքներով։ Կախէթի այդ գիւղերի մէջ ամենից լայնի և «արիստոկրատական» գիւղը՝ Կարղանախն է, որտեղ պատրաստւում է ամենալաւ գինի, որտեղ գտնւում է կոմս Շերեմետեւի կալւածքը՝ հիանալի տնով ու հարուստ, ճոխ, գեղեցիկ այգիով։ Շերեմետևը ունի իւր կալւածքում գինի պատրաստելու համար մի նորաձև գործարան, որտեղ պատրաստում են երևելի գինիներ... Բացի Շերեմետեւի գործարանից, այդ գիւղերում կան էլի ուրիշ գործարաններ, որ պատկանում են գանազան վրացի իշխանների։ Առհասարակ Կախէթի ամենամեծ և աչքի ընկնող արդիւնաբերութիւնը՝ գինին է։ Այդ գիւղերում չը կայ մի հասարակ գիւղացի, որ չունենայ իւր (սեպհական, կամ կապալով առած) խաղողի այգին, որ չը պատրաստէ և չը վաճառէ գինի։ Գինին Կախէթի փառքն է, նորա հարստութիւնը և պարծանքն է։ Գինու հետ կապւած է այստեղի ժողովրդի թէ տնտեսական և թէ հոգեկան կեանքը։ Այո, և հոգեկան, որովհետև՝ մէկ կողմից գինու չափազանց շատ գործածութիւնը, միւս կողմից էլ բնութեան թովիչ գեղեցկութիւն-

ները ալստեղի ժողովրդի վրայ դրել են մի առանձին կնիք, մի արտա-
յայտիչ և աչքի ընկնող հոգեկան տրամադրութիւն, որ ռուսաց Լերմոնտով
բանաստեղծը շատ ճիշդ նկատել է իւր ոտանաւորի մէջ.

Посмотри: въ тѣни чинары,
Пѣну сладкихъ винъ
На узорные шальвары
Сонный льетъ грузинъ;

Ի հարկէ այդ сонный խօսքը միայն վրացոց չի վերաբերում. այդ միենոյն
յատկութիւնը ունին և հայերը որ ապրում են վրացոց հետ, միենոյն տնտե-
սական, միենոյն բնական պայմաններում։ Բանը նրանումն է, որ զինին և
գեղեցիկ բնութիւնը թուլացնող, ցրող, «ապակենտրոնացնող» ազդեցու-
թիւն են անում ալստեղի ժողովրդի վերայ։

Շարունակ ապրելով հարուստ բնութեան մէջ, անդադար վայելելով
այդ բնութեան շքեղ, գրաւիչ տեսարանների քաղցր տպաւորութիւնները,
ալստեղի ժողովուրդը, մի առանձին բնազդմամբ հակում է դէպի բաւա-
կանութիւնները, սկսում է երևակայական աշխարհով ապրել։ Տնտեսական
պայմանների համեմատական թեթևութիւնը, միւս կողմից, տրամադրում
է ժողովրդին դէպի անհոգ և ինքնաբաւական կեանք, դէպի զարմութիւն-
ները։ Իսկ զարմութեան և բաւականութեան ամենամեծ ֆակտորը զինին
է, քէֆ-ուրախութիւնն է... Պէտք է տեսնել՝ թէ ինչպիսի եռանդով, ինչ-
պիսի կատարեալ ինքնամոռացութեամբ քէֆ է անում ալստեղի ժողո-
վուրդը։ Եւ, որ ամենազլխաւորն է, այդ քէֆը, այդ ուրախութիւնը շատ
հեշտ է ձեռք բերում ալստեղ. գինին էժան և առատ է, իսկ ոչխարի
խորովածը նոյնպէս մի հաղագիւտ բան չէ։ Իմ խօսքը քաղաքացու մա-
սին է, իսկ գիւղացին նոյնպէս, իւր չափով, վատ չի մնում քէֆից, ուրա-
խութիւնից։ Գիւղացու համար քէֆ անելու ամենաթանկ ժամանակը—եկե-
ղեցիների օրհների օրերն են։ Ալստեղ՝ Կախէթի և, առհասարակ, Սղնախի
շրջակայքում ապրող՝ թէ վրացի և թէ հայ շինականը ամեն բան դուրս է
բերում, ամեն ունեցած-չունեցած սկսում է մսխել, վատնել...

Գիւղացիների մէջ, կանայք աւելի տոկուն և աշխատասէր, հոգատար
են երևում, քան թէ տղամարդիկ։ Կանայք ամեն առաւօտ, օրաւ ամեն
տեսակ եղանակին՝ թէ ամառ և թէ ձմեռ՝ երկար ու զառիվեր ճանա-
պարհներով անցնում են մի քանի վերստ, որպէս զի գիւղերից ծախու
իրեղէններ բերեն Սղնախի շուկան, «տօնավաճառի» համար։ Ճիշտ որ
«տօնավաճառ»։ Տեսնում ես՝ կանուխ, առաւօտ մօտ հարիւրից աւել
գիւղացի կանայք՝ ծեր և երիտասարդ՝ շրջանաձև նստած են հրապարակի
վերայ, և Սղնախի հասարակութիւնը, խառնուած այդ բազմութեան մէջ,
առուտուր է անում։ Այդ փոքրիկ գիւղական տօնավաճառում կարելի՝ է
գտնել ամեն բան, ինչ որ Կախէթի գեղջկուհին ընդունակ է արտադրել

իւր տնային աշխատանքով ու հոգացողութեամբ. Փոքրիկ խելագաններով գինի, զանազան չորացրած և թաց մրգեր, չուչխել, զերացած հաւեր, հնգկահաւեր, ամաններով կաթ, մածուն, երկար-երկար հացեր, որ տեղական լեզուով կոչւում է «շոթ», ձեռագործ պատրաստած իրեղէններ—գուլպա, պաճիճ, շերիտներ և այլն և այլն. Ցօնավաճառը շարունակւում է մինչև ժամը 10—11 և յետոյ՝ այդ կանանց խմբերը քիչ-քիչ սկսում են ցրւել, հեռանալ հրապարակից և, դարձեալ նոյն ճանապարհով, ուղեորւում են դէպի գիւղ. իսկ հետեւեալ առաւօտը էլի նոյն բանը, էլի նոյն վաճառող կանանց խումբը նստած է Աղնախի հրապարակի վրայ. Գիւղացի տղամարդոց ես չեմ տեսել այդպիսի եռանդուն գործունէութեան մէջ... Շատ-շատ՝ վրացի գեղջուկը, սակերը լծած՝ գինի է տեղափոխում գիւղերից քաղաք, և այդ պարապմունքի ժամանակ, անհոգ ինքնաբաւականութեամբ երգում է ժողովրդական լայնի «հարալոն»...

Ցաւում եմ, որ չեմ կարողացել տեսնել այստեղի գիւղացուն՝ իւր դաշտային պարապմունքի ժամանակ,—վարի, ցանքի, հունձքի և կալի աշխատութեան մէջ. Բայց, որքան ես կարողացել եմ տեղեկանալ՝ այդ գործը այնքան էլ մեծ աշխատանք և քրտինք չէ պահանջում Կախէթի գիւղացուց. Նախ որ հողի քանակութիւնը այնքան մեծ չէ, և երկրագործութիւնը գլխաւոր պարապմունք չէ այստեղ, իսկ երկրորդ, որ Ալազանի դաշտը, մշակութեան համար, շատ փափուկ և պարարտ է. Որ երկրագործութիւնը այնքան մեծ դժւարութիւն չէ պատճառում այստեղի գիւղացուն՝—այդ երևում է մասամբ և այն հանգամանքից, որ եղը, գիւղացու աշխատանքի գլխաւոր ոյժը և ապաւէնը՝ չունի այն մեծ և կարևոր նշանակութիւնը, չի վայելում գիւղացու այն հոգը և խնամքը, ինչպէս այդ մենք տեսնում ենք իսկական երկրագործ ժողովրդի մէջ, օրինակ, Շիրակի գաւառում. Կախէթի գիւղացու եզները՝ թոյլ, ցածրահասակ, վտիտ և անկենդան բաներ են, բոլորովին նմանութիւն չունին Շիրակի գիւղացու հերկուլէս-եղներին...։ Հէնց ինքը, այստեղի գիւղացին էլ սաստիկ զանազանւում է Շիրակի գիւղացուց իր գէմքի անտարբեր արտայայտութիւնով՝ ուռած, կարմիր երեսով, կարճ հասակով և թոյլ մարմնով. Շիրակի գիւղացին—մարմնացած աշխատանք և տոկունութիւն է. Նրա ամբողջ ջլոտ և բարակ կերպարանքը, բարձր հասակը, խոհեմ, ուշադիր և մշտական հոգսով պատած դէմքը՝ պարզ ցոյց են տալիս, որ կեանքը խաղ ու պար չէ սրա համար, որ գոյութեան կռւի մէջ՝ սա, մի եռանդուն և յամառ մրցումով, աշխատում է ապրել, մտածում է ոչ միայն այսօրւայ, այլ և ապագայի մասին...։ Երկրագործական աշխատանքի ծանր, խիստ և լուրջ ոգին, Շիրակի բնութեան աղքատ, չոր և անգեղատեսիլ կերպարանքը ստիպել են այստեղի գիւղացուն «խելքը գլուխը հաւաքել», կենտրոնանալ, խոհեմ, մտածող և լուրջ լինել. Այո, բնութիւնը այստեղ երես չի տալիս հայ գիւղացուն... Ինչ կայ Շիրակում՝ բացի ցորենից, գարուց և կտաւա-

հաւից. ոչինչ, ոչինչ և դարձեալ ոչինչ։ Շիրակը, Երևանի և Թիֆլիսի նահանգների մէջ մի կատարեալ անապատ է՝ բուսականութեան, պտուղների, բերքերի կողմից։ Մանկութեան հասակից խեղճ ժողովրդի տչքը ոչ մի բան չի հրապուրում բնութեան մէջ՝ բացի արեգակի մուտքից և ելքից... կարծես Աստուած խռով է կացել այդ երկրի գլխին՝ զրկելով այն բոլոր չուայլութիւններից, ինչով որ առատօրէն վարձատրուած են Կովկասի միւս տեղերը. կարծես՝ խիա անտառները, պտղատու ծառերը, հարուստ այգիները և պարտէզները Շիրակի համար չեն ստեղծած աշխարհիս երեսին։ Եւ ահա, գտանուելով այս տեսակ սուղ ֆիզիքական պայմանների մէջ, զրկուած բնութեան ամեն դեղեցկութիւններից և չլացնող, գրաւող պարգևներից, Շիրակի հայ գիւղացին իւր տչքերը դարձնում է դէպի գետին և իւր ոտների տակ գտնում է իւր կեանքի միակ և հաստատուն խարիսխը՝— սև հողը, որ հաստ շերտով փռուած է այդ երկրի ընդարձակ և լայն դաշտերի վրայ։ Այդ հողը տալիս է գիւղացուն առատ մարդարտահատիկ ցորեն, այդ հողը կերակրում է գիւղացու տաւարը հիւթալից և սննդարար խոտով։ Բայց որքան աշխատանք է պահանջում դիւղացուց հողը իւր տուած ցորենի և խոտի համար, որքան ֆիզիքական և հոգեկան հառնդ է կորցնում հայ գիւղացին՝ իւր առօրեայ հացը ճարելու, իւր կովերին ու եղներին կերակրելու համար... Եւ ինչ է Շիրակի հայ գիւղացու ապրուստը՝ հաց, պանիր, իւղ և մածուն—ահա նրա մշտական կերակուրը՝ և այն էլ ամեն գիւղացի չի վայելում այդ «բարիքները». կան շատ ընտանիքներ, որ ամիսը մի անգամ տաք կերակրի երես չեն տեսնում, որ ամբողջ «մեծ պասը» լոկ չոր հացով են անցկացնում... միս ուտելը իսօ մի կատարեալ սօնախմբութիւն է Շիրակի գիւղացու համար։ Եթէ այս տնտեսական նեղ պայմանների վրայ աւելացնենք միւս կողմից և բնութեան խստութիւնը,— չարունակ 3—4 ամիս տեղ ցրտաւուն ձմեռները, երբ գիւղացին, արջի նման, կծկւում, մտնում է իւր անասունների հետ գոմերի անկիւնները, և, բացի տաքանալուց՝ ուրիշ բանի վրայ չի մտածում. եթէ աչքի առաջ ունենանք, որ համարեայ ամեն տարի՝ կամ ցուրտը, կամ կարկուտը և կամ հեղեղը քչից-շատից ջնասում են ալստեղի արտերին և գիւղացուն լաճախ կցում են ծայրալեղ լուսահատութեան մէջ,—այն ժամանակ գուցէ մեզ համար մատաւորապէս հասկանալի լինի Շիրակի գիւղացու իսկական դրութիւնը, գուցէ մենք կարողանանք երևակայութիւնով ըմբռնել, թէ ինչ «ծանր քար է» ալստեղի գիւղացու համար՝ իւր առօրեայ ողորմելի ապրուստը.... Բայց նա դարձեալ չի լուսահատում. դարձեալ նա եռանդով կռւում է իրան չրջապատող լուսահատական, նեղ հանգամանքների հետ։ Եւ ահա, այդ մշտական, անընդհատ կռիւն է, որ այնպէս ամրացրել, պողպատ է դարձրել Շիրակի գիւղացուն. այդ կռիւն է, որ նրա մէջ զարգացրել է զարմանալի տոկունութեան, դիմացկանութեան ոգին։ Աշխատանքը հայ գիւղացու կեանքի դէլիոն է,—պահեցողութիւնը, զրկանքը,—

նրա «հաւատոյ հանդանակն» է։ Այս տեսակ խիստ, ասկէտական կեանքով է ապրում Շիրակի հայ գիւղացին։

Ի՞նչ համեմատութիւն սորա և Կախէթի գիւղացու մէջ. Կախէթի գիւղացին (թէ վրացի, թէ հայ՝ միևնոյնն է) երես տուած երեխայի է նմանում, և նրան երես տուող, փայփայող դդոտ մայրը՝—բնութիւնն է։ Ես իմ լօդուածի սկզբում, կարողացածիս չափի, նկարագրեցի Կախէթի բնութիւնը. այդ նկարագրութեան մէջ ես մի տեղ ասացի, որ «ամբողջ Կախէթը՝ խաղողի մի մեծ և ընդարձակ այգի է»։ Բայց այդ միայն նշանակում է, որ խաղողը «տիրապետող» բոյն է այստեղ. բացի խաղողից՝ այստեղի արեգակի տակ հասնում են՝ թուզ, նուռ, վիշատ, ընկոյզ, նուշ, սերկևիլ և այլ շատ տեսակ պտուղներ, որոնք ըստ չափու՝ նոյնպէս նպաստում են գիւղացու կեանքի ապահովութեանը։ Չը պէտք է մոռանալ և այն, որ Կախէթի կլիման չափաւորեց մեղմ, դուրեկան, համարեա «դրախտային» է... Թէև փայտը, վառելիքը, շնորհիւ անտառների, շատ էժան է այստեղ, բայց ինչ հարկաւոր է վառելիք ձմրան համար, քանի որ իւր ամբողջ ընթացքում Այլազանի հովիտը մեկ է ձիան սպիտակ ծածկոցից, այն ծածկոցից, որը մի արշին հաստութեամբ ընկած է լինում Շիրակի դաշտերի վրայ։ Մինչդեռ խեղճ շիրակեցին, ձմրան սարսափելի ցրտերի ժամանակ, փայտի կտոր անգամ չունի և, հայր թխելու, տաքանալու համար՝ գործ է դնում իւր տաւարի աղբից պատրաստած ղզելի աթարը. մինչդեռ այդ ողորմելին աթարի թանձր ծուխով ու գոմի գարշահոտութիւններով է տաքացնում սառած մարմնի անդամները,—Կախէթի բնակիչը, մեղմ և հանդարտ ձմրան ժամանակ՝ երկու քայլ է փոխում դէպի անտառ, կտրում է այնտեղից բարակ մացառներ, բարձում է իւր հաւատարիմ էշի վրայ և բերում է Սղնախ վաճառելու։ Այդ գործով նա զբաղուած է բոլոր աշնան և ձմրան ընթացքում և, դրանից նոյնպէս, բաւականին արդիւնք ստանում է։ Կարելի է ասել, որ այն կողմնակի արդիւնքները կախէթցին միայն «շռայլութեան» համար է մնում.—ի հարկէ շռայլութիւն խօսքը հասկացած գիւղական մտքով, համեմատած դարձեալ շիրակեցու հետ։ Եւ ճշմարիտ՝ ով է լսել, որ Ալէքսանդրապոլի կողմերի (Շիրակը այդ է) գիւղացին՝ գիւղից քաղաք եկած ժամանակ, տուն վերադառնալիս, մտնի կանդիտերի խանութը և մեր երեխաների համար՝ պիրոժնի, կոնֆեկտներ առնի... Ո՞վ է տեսել, որ խստակեաց և հաշւատես շիրակեցին՝ քաղաքի գինետներում ընկերովի քէֆ անէ, գինի խմէ։ Գինի՞... գինի խմելը Ալէքսանդրապոլի և Կարսի վաճառականների համար էլ մի առանձին արտաքոյ կարգի երեոյթ է, ուր մնաց գիւղացու համար։ Իսկ Կախէթում, գիւղացին պիրոժնի և կոնֆէկտներ է առնում երեխաների համար, հովանոց, ձեռնոցներ է ընծայում կնոջը, քէֆ է անում Սղնախի գինետներում և փառչերով սև գինի է կոնծում...

Իմ առաջ բերած մի շարք տնտեսական և բնական պայմանների հա-

մեմատութիւնից ընթերցողը հեշտութեամբ կարող է եզրակացնել, որ Կովկասի երկու նշանաւոր դաւառները՝ Կախէթը և Շիրակը՝ կատարեալ հակապատկեր են միմեանց։

Մի կողմ՝ չոռայլ, գեղարուեստական բնութիւն է, մեղմ, կենդանարար կլիմայ, հարուստ բուսականութիւն.—միւս կողմ՝ ամայի և անդեղատեսիլ դաշտեր, խիստ և ճնշող կլիմայ, չոր, անպտուղ, անօգուտ և աղքատ բուսականութիւն։ Այդպիսիտարբեր և միմեանց հակառակ բնական պայմանների մէջ ապրող ժողովրդի կեանքն էլ ստացել է ծայրաստեղ հակառակ՝ թէ տնտեսական և թէ հոգեբանական՝ արտայայտութիւն։

Կախէթի ժողովուրդը հարուստ է, չոռայլ, զարթութիւն և քէֆ սիրող է. այդ հարստութեան, չոռայլութեան, զարթասիրութեան հետևանքն էլ՝ մարդոց բնութեան ընդհանուր թուլութիւնն է, նրանց անհոգ և ուրախ հոգեկան տրամադրութիւնն է։

Շիրակի ժողովուրդը աղքատ է, պարապում է սոսկ երկրագործական աշխատանքով, այդ աշխատանքից նա ստանում է իւր կեանքի սուղ և չքաւոր ապրուստը։ Աղքատութիւնը, բնութեան մերկութիւնը և սաստիկ ծանր աշխատանքը կրթել, դաստիարակել են Շիրակի գիւղացուն, տալով նրա բնաւորութեանը՝ խիստ, դիմացկուն, լուրջ արտայայտութիւն և մրցելու ընդունակութիւն։

Այժմ հարց. ում է պատկանում ապագան...—ապագան ոյժի կողմն է, աշխատելու ընդունակութեան, տոկուն, ինքնազուսպ և խիստ բնաւորութեան կողմն է։ Առաջադիմութիւնը կատարւում է՝ ոչ թէ քէֆով, ուրախութիւնով ու անհոգ տրամադրութիւնով.—առաջադիմութիւնը կատարւում է ծանր աշխատանքով, լուրջ, խելացի և ողջախոհ վարք ու բարքով։

Շիրակի գիւղացին, տանելով իւր ուսերի վերայ կեանքի ամեն տեսակ նեղութիւններ ու զրկանք, անդադար կռուելով բնութեան խիստ ոյժերի և պայմանների հետ, անդադար մտածելով իւր կեանքի ապահովութեան, իւր առօրեայ մի կտոր հացի մասին՝—ներկայանում է մեր առաջ, որպէս մի կայուն և անլողդողդ զօրութիւն, որպէս մի կենդանի գրաւական՝ ապագայ կեանքի, ապագայ առաջադիմութեան։